

Նամակ «Արարաթի» խմբագրութեան.

Որպէսզի նախքան Մայր Տաճարի մտադրեալ նորոգութեան ձեռնարկելը՝ փարատուի մեծ գմբէթի նախնական ձևի մասին ծագած տարակոյսները և ճշմարտութիւնը վերականգնուի, խնդրեմ ըստհասանել նոյնութեամբ հրատարակել իմ այս պատասխան—հերքումը Արարատի ներկայ Դեկտեմբերի կամ Յունվարի տետրում:

Ամեն մի գրական վէճ կամ քննադատութիւն ուղղամիտ մարդոց համար մի նպատակ միայն պիտի ունենայ, այն է՝ գտնել —ցոյց տալ ճշմարտը: Եւ հէնց այսպիսի ցանկութեամբ քննադատելով Մեսրոպը վարդապետ Տէր-Մովսէսեանի (այժմ Եպիսկոպոս) «Էջմիածին եւ Հայոց հնագոյն եկեղեցիներ» շարադրութիւնը, ես ցոյց եմ տուել, ի միջի այլոց, նրա այն ենթադրութեան սխալը, որ նա գրել է թէ՝ «Էջմիածնի Մայր գմբէթը հին լինել չի կարող, եթաներորդ դարում, Կոմիտաս Կաթուղիկոսի ժամանակ այդքան բարձր թմբուկով և սրածայր վեղարով գմբէթներ չէին շինում» (Աղգ. Հանդ. XVI, եր. 179):

Իմ քննադատութեան մէջ* ընդդիմաբանելով Մ. վարդապետին, ասել եմ, որ եթաներորդ դարու Կոմիտաս կաթուղիկոսի շինութիւնից յետոյ «գմբէթի կործանման և վերաշինութեան մասին՝ ոչ մի պատմական տեղեկութիւն, կամ գրեւոր աւանդութիւն՝ չկայ... Բացի այս. Էջմիածնի գմբէթը թէ՛ Կոմիտասի շինածը չի, —որի մասին վկայում է աւանդութիւնը և պատմութիւնը,—թէ՛ յետոյ շինուած, ինչպէս կարծում է Մ. վարդապետը, սակայն տաճարի և գմբէթի յատակագծի, մեծութեան և բարձրութեան սկզբնականութեան մասին տարակուսել չենք կարող, բայց որ տարակուսում է Մ. վարդապետը: Չենք կարող տարակուսել, ոչ միայն այն պատճառաւ, որ պատմութիւնը չի վկայում, ինչպէս վկայում է Հռիփսիմէի և Գալիանէի վանքերի համար թէ՝ «կարի ցած և մթին, խրթին և մթին, փոքրատեսակ» են եղել նախկին շինութիւնները (Սերէոս և Յով. կաթ.), այլ և այն պատճառաւ, որ աւանդաբար գիտենք թէ՛ իբրև «հրեշտակացոյց հիմնարկութիւն» (Ղ. Փարպ.), նորոգել կամ վերաշինել են երկիւղածութեամբ՝ նոյն հիմանց վերայ և նոյն սկզբնական ձևով: Այոպէս համոզուած գիտէ և Շահխաթունեանցը (և Առաքել պատմագիրը): Խօսքս ի հարկէ

*) Տես «Գրախօսութիւն, Գրական—Բանասիրական (Զուարթնոցի շուրջը), եր. 26—28:

նոր յաւելեալ մեծ և լիորդ զանգակատունների և պահարանների մասին չէ» (եր. 26—28): Բերել եմ և Ադաթանգեղոսից լիպայութիւններ, տե՛ս նոյն աեղում:

Ապա, այս տարուայ Յունիսի 9-ի երեկոյեան Վեհարանում Տաճարի նորոգութեան համար հրաւիրուած Միաբանական Ժողովում, իմանալով որ մտածում են դմբէթի ձեք լիօխել, զարմացայ այգալիսի համարձակութեան վերայ: Թողնենք ժողովում խօսուածները. հետեւեալ առաւօտ գրեցի Դիւանապետ հ. Բագարատ վարդապետին. «...Այսու ամենայնիւ չեմ կարող լռութեան տալ՝ որ մտածում են դիպչել մեծ դմբէթին: Պատմական միակ անաղարտ պահուած և առանձնայատուկ՝ դմբէթի ձեն է, զոր համարձակում են լիօխել: Ձերկարացնելով, ընդ սմին ուղարկում եմ Ձեզ իմ «գրախօսութիւն» գրքոյկի մի օրինակ, կարդացէք գլ. ԺԱ. եր. 26—28: Պատեհ առթիւ զեկուցէք սորա մասին նորին Սրբութեանը»: Եւ զեկուցել էր:

Սորանից յետոյ, զարմանքով կարդացի «Արարատում» (սեպտ. եր. 804—7) հանգ. Կաթողիկոսի հաստատած՝ «Էջմիածնի Մայր—Տանարի նորոգութեան մրցանակի ծրագիր»-ի մէջ, նոյն Դիւանապետի ստորագրութեամբ. «...մեծ դմբէթի նկատմամբ թոյլատրւում է լիօխել միայն նորա տանիքի թեքութիւնը»:

Ուրեմն, մտածեցի, լճուել են այնքան դարերի հնութիւնը եղծանել, այլ և ստել «հրեշտակացոյց հիմնարկութիւն» աւանդութիւնը: Այդ անթոյլատրելի պիտի լինի: Մտածում էի յարմար առթիւ խօսել Կաթողիկոսի հետ: Եւ ահա նոյեմբերի Արաբատը իւր խմբագրական մատենախօսականով (եր. 1110—1112) եկաւ լճիւ դնելու արծարծուած հարցին, ասելով. «Մովսէս Խոտանանցու օրով վերաբնութեց (գմբէթը) գմբէթի լուսամուտների տակի քիւից սկսած՝ այժմեան ձեւով»: Ես եմ ընդգծում:

Ուրեմն, ըստ Արարատի Մատենախօսութեան, այժմեան գմբէթը ոչ միայն եօթներորդ դարու շէնքը չէ, այլ և Խոտանանցին վերաշինելով պատուանդանից սկսեալ՝ լիօխած է նորանախնական ձեք: Հետեւաբար լռելեայն հաստատում է Մ. վարդապետի ենթադրութիւնը, այն՝ զոր ես համարել էի սխալ, և դարձեալ համարում եմ սխալ:

Արարատի «Մատենախօսութեան» գրողը, տեղեկանալով Կ. Կոտանանցի «Հայագիտութիւնն արեւմեան եւրոպայում» նոր լոյս տեսած գրքից, որ «Հայաստան ճանապարհորդող Դէորդ Տէկտանդէրը 1604 թուին (ի՛շ 1575—1612) տեսել է ու էջմիածինը շէն, Տաճարը ունեցել է մի գմբէթ, որի մէջտեղը մի կլոր լուսամուտ: Տեսել է ու Լուսաւորչի աջը. ներկայացել է Կա-

Թուղիկոսին, որից և պատիւներ տեսել», անմիջապէս յաւելացնում է. «Անշուշտ գմբէթի այդ կլոր լուսամուտը կազմուել է գմբէթի վեղարի խոնարհուած լինելուց, որ յետոյ Մովսէս Խոտանանցու օրով վերաւերելուց լուսամուտների փոխանակած՝ այժմեանն ձեւով»:

Եւրոպացի ճանապարհորդ Տէկտանդէրը այնքան միամիտ չէր լինի, որ գմբէթի վեղարի փշուածքը «կլոր լուսամուտ» անուանէր: Կայ անշուշտ թիւերիմացութիւն: Բայց այս թողնենք մի կողմ, որովհետեւ նորա գրութեան չափն ենք մեր ձեռքում, ստուգելու համար գոնէ նորա սեպհական բառերը, որից յետոյ աղաւթ լինելն են թաղարութիւններ անելու: Սակայն Խոտանանցու (Մովսէս վարդապետ Սիւնեցի, լուսարար ու Եջմիածնի, ապա կաթողիկոս 1629—1632 թ.) մասին և նորա արած շինութիւնների և նորոգութիւններին ահանատես և աշխատակից՝ միակ պատմագիրն է Առաքել վարդապետ Դավրիժեցին, որից առել է Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանցը: Բայց Շահխաթունեանցը, ինչպէս և մեր բոլոր նախնիք, խոր համոզուած լինելով՝ որ ու Եջմիածնի շինուել է, այլ և վերաշինուել և կարկատուել—նորոգուել է՝ սկզբնական «հրեշտակացոյց, լուսահառոյց Քրիստոսանկար» ձեւով և չափով, չի կարծել թէ յետոյ կասկած յարուցանողներ կը լինին, ուստի Խոտանանցու նորոգութեանց մասին օգտուել է Դավրիժեցուց՝ ինչքան ինքը պէտք է համարել: Ինձ թուում է, որ Արարատի մատենախօսութեան գրողը աչքի առաջ ունեցել է Շահխաթունեանցի (ա. հատ. եր 26) քաղած—օգտուած այդ թերի տեղեկութիւնը միայն: Թէպէտ այդ տեղեկութիւնն էլ իրաւունք չի տալիս՝ Խոտանանցուն վերագրել գմբէթի վերաւերելուն եւ նոր ձեւափոխութիւնը:

Առաքել պատմագրից Շահխաթունեանցի քաղածը.—

«Սալարի յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ՝ եղեալ որջ զեռնոց և թռչնոց, և մեծամեծ լուսամուտն՝ զոր ունի (եկեղեցին)՝ ամենն ի բաց կայր տաանց վանդակի... Իսկ յարտաքուստ կռսէ դուռն կաթողիկէին և տանին ամենայն, և երեսը որմոցն քանդքանդեալք և քարինքն թափեալք, և որմոյ յատակաց վէմն փշրեալք և ծակոտեալք» (Առաք. պատմագիր եր. 233):

Սակայն, որովհետեւ նոյն Առաքել պատմագիրը երկու երես յետոյ գրում է. «Յետ այսորիկ զեկեղեցւոյ զմբէթի ճանիքն նորոգեցին, քանդի օալերէն քանդեալ եւ քանդեալ ի բաց ոստեալ էին: Եւ եթէ որ տենչացեալ գիտել կամեցի զչափ լուսակա-

ռոյց Քրիստոսանկար աստուածաբնակ տաճարի սուրբ Էջմիածնի, այսքան է. յիսուն հալարի դադ երկայքն է...» (Եր. 235):

Ուրեմն, Խոտանանցին ոչ թէ գմբէթի պատուանդանից սկսած վերաշինել է և հին ձևը փոխել,—այնպիսի երկիւղած հաւատացեալները եթէ նոյն իսկ ամբողջ գմբէթը վերաշինէին էլ, չէին համարձակուի «հրեւեակացոյց, լուսեակառոյց Քրիստոսանկար» ձևը փոփոխել,—այլ նա գմբէթի տանիքի թափուած ու խախտուած արտաքին սուլերն է նորոգել:

Հետեւեալը՝ գմբէթը, մանաւանդ նորա ձեւը՝ պէտք է ընդունուի և ճանաչուի նախնականը,—ինչպէս ճանաչուել է ցարդ,—ուրեմն եւ այսուհետեւ պահուի անձեռնամխելի, իբրեւ սրբազան հնութիւն:

29 դեկտ. 1910 թ.

Բարդուղիմէոս եպիսկ. Գեօրգեան.



Հնագիտական պեղումներ ճին Հայաստանում:

(«Кавказъ» 1910 № 296).

«Պետերբուրգում կազմուած մի բազմամարդ ժողովում Ռուսաց կայսերական հնախօսական ընկերութեան դասական մասնի անդամ պրօֆ. Ն. Մառը, գրում է «Н. В.», տեղեկութիւններ տուեց անցեալ ամառը կատարած հնախօսական պեղումների և նրանց հետեւանքի, նաեւ հին Հայաստանի շրջանում, Գառնիում հետազօտութեան մասին: Լրացուցիչ զեկուցումներ արին պեղումներին մասնակցող—Ե. Ի. Սմիլնովը «Ուղեւորութիւն Գեղամայ լեռներում» (О поездке въ Гегамскія горы), և Կ. Կ. Բոմանովը, որ փորձել էր կազմել Գառնու և նրա գլխաւոր հնութեան յիշատակարանի—հին հայկական տաճարի—ուրումնակարը:

Պեղումների համար ընկերութիւնը 2000 ռ. էր յատկացրել: Տեղի լեռնային և կորդ լինելու պատճառով հետազօտութիւնները մեծ գոյաւորութեամբ էին կատարուում: Աշխատութեան հետեւանքն պսակուեց հին Հայաստանի գեղարուեստի պատմութեան վերաբերութեամբ հարուստ և բազմադան արձանագրական և ճարտարապետական (մօտ 700 քանդակներ) նիւթով: Հետազօտութեան գլխաւոր յիշատակարանը Գառնիում է մնացորդը հռոմէական ժամանակից հին հեթանոսական տաճարի, որ բարբարոսաբար կործանուել է: Տաճարը կառուցուած է մինչև քրիստոնէական թուականի 4-րդ դարը